ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի ապրիլի 10-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին 2024 թվականին առաջարկվող **«ՀՀ-ում շինանյութի շուկայի ուսումնասիրություն (ամրանների շրջանառության ոլորտի օրինակով)»** խորագրով հետազոտական թեման հաստատելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը «Ամբերդ» հետազոտական կենտրոնին առաջարկություն է ներկայացրել ուսումնասիրել ՀՀ-ում շինանյութի շուկան՝ ամրանների շրջանառության ոլորտի օրինակով: Հետազոտական թեման քննարկվել և հաստատվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 3-ի հարցման կարգով նիստում (արձանագրություն N 4):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի նիստի որոշումը՝ **հաստատել** «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին 2024 թվականին առաջարկվող **«ՀՀ-ում շինանյութի շուկայի ուսումնասիրություն (ամրանների շրջանառության ոլորտի օրինակով)»** խորագրով հետազոտական թեման (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. ապրիլի 10
Երևան